

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Դեկտեմբերի 18-ին «Վրացական երազանքից» Վրաստանի վարչապետի թեկնածու Գիորգի Գախարիան, Վրաստանի Սահմանադրության եւ խորհրդարանի կանոնակարգի համաձայն, 10-րդ գումարման խորհրդարանին ներկայացրեց կառավարության նոր կազմն ու «Եվրոպական պետության շինարարության» կառավարական ծրագիրը:

«Եվրոպական պետության շինարարության» ծրագրի նպատակը համավարակով պայմանավորված ճգնաժամի հաղթահարումն է, էկոնոմիկայի արագ վերականգնումն ու զարգացումը, յուրաքանչյուր քաղաքացու համար կայուն եւ անվտանգ միջավայրի ստեղծումը, կառուցվածքային բարեփոխումների շարունակումը:

Ջուզահեռաբար, երկիրը կշարունակի ժողովրդավարության ամրացման ուղղությամբ քայլերի իրականացումը եւ արտաքին



ասպարեզում եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման միտվածությունը: Հաջորդ տարիների գլխավոր խնդիրը լինելու է երկրի ինստիտուցիոնալ, տնտեսական եւ սոցիալական նախապատրաստումը 2024 թվականին եվրամիության լիարժեք անդամ դառնալու համար:

Ելնելով վերոնշյալ նպատակներից, երկրի էկոնոմիկայի արագ վերականգնման եւ զարգացման, ինչպես նաեւ հզոր, միասնական եւ ժողովրդավարական պետության շինարարության համար Վրաստանի կառավարության ջանքերը կնպաստակամ դրվեն արտաքին քաղաքականության, անվտանգության, հակամար-

չերից, երկրի էկոնոմիկայի արագ վերականգնման եւ զարգացման, ինչպես նաեւ հզոր, միասնական եւ ժողովրդավարական պետության շինարարության համար Վրաստանի կառավարության ջանքերը կնպաստակամ դրվեն արտաքին քաղաքականության, անվտանգության, հակամար-

չերից, երկրի էկոնոմիկայի արագ վերականգնման եւ զարգացման, ինչպես նաեւ հզոր, միասնական եւ ժողովրդավարական պետության շինարարության համար Վրաստանի կառավարության ջանքերը կնպաստակամ դրվեն արտաքին քաղաքականության, անվտանգության, հակամար-

ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՀԻՆԳ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՉԵՂԱՐԿՎԵՑԻՆ



Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներով մեկ տոկոսի ընտրաշենք հաղթահարել էին ինն ընտրական սուբյեկտներ:

«Վրացական երազանքից» բացի, խորհրդարանի մանդատներին հավակնում էին նաեւ «Ազգային շարժումը», «Եվրոպական Վրաստանը», «Ռազմավարությունը՝ շինարար», «Լեյբորիստական կուսակցությունը» «Լեյոն», «Գիրչին», «Քաղաքացիներն» ու «Հայրենասերների ալյանսը»: Նշենք, որ ընդդիմադիր կուսակցությունները հայտնեցին խորհրդարանը բոլորտելու իրենց որոշման մասին եւ հրաժարվեցին դեկտեմբերի 11-ին, նորընտիր խորհր-

դարանի անդամիկ միստիկ մասնակցելուց: Նշենք, որ «Միասնական ազգային շարժումը» հավակնում է 36 մանդատի, «Եվրոպական Վրաստանը»՝ 5, «Ռազմավարությունը՝ շինարար», Լեյոն, «Գիրչին» եւ «Հայրենասերների ալյանսը»՝ 4-ական, «Քաղաքացիները»՝ 2, իսկ «Լեյբորիստական կուսակցությունը»՝ 1 մանդատի:

Դեկտեմբերի 15-ին, 10-րդ գումարման խորհրդարանի ութ ընդդիմադիր կուսակցություններից հինգ սուբյեկտներ դիմեցին օրենս-

դիր մարմնին՝ իրենց պատգամավորական լիազորությունները դադարեցնելու համար: Նման դիմում են ներկայացրել «Ազգային շարժում-Միացյալ ընդդիմությունը» (դաշինքի մեջ են նաեւ «Հանրապետական կուսակցությունը» եւ «Պետությունը՝ ժողովրդի համար» կուսակցությունը), «Եվրոպական Վրաստանը», «Լեյոն», «Ռազմավարությունը՝ շինարար» եւ «Լեյբորիստական կուսակցությունը»:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԵՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐՆ ԷՐ, ՈՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ ՍԿՍԵՅՍ ԱՏԱՆԱԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ»

Դեկտեմբերի 17-ին, Վրաստանի վարչապետի պաշտոնակատար Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Նիստում վարչապետի պաշտոնակատարը մասնակիորեն հանրագումարեց անցող տարվա տնտեսական ցուցանիշները, առանձնացնելով միջազգային կազմակերպությունների կողմից տրվող գնահատականները:

Գիորգի Գախարիայի խոսքով, դեկտեմբերի 16-ին կայացել է Լիժնյոյի միջազգային հիմնադրամի (IMF) 7-րդ հանդիպումը, որտեղ քննարկվել է Վրաստանի ծրագրի իրականացման 7-րդ փուլը: Քննարկման ընթացքում վերահաստատվել են Վրաստանի տնտեսական ձեռքբերումները, հատկապես կառավարության կողմից ընդունված բիզնեսի աջակցության հատուկ ծրագիրը՝ ի պատասխան տնտեսական ճգնաժամի:

Վարչապետի պաշտոնակատարը նշեց, որ Ար-

ժույթի միջազգային հիմնադրամը կանխատեսում է, որ 2021 թվականին Վրաստանում տնտեսական աճը կկազմի մոտ 4,3 տոկոս, բայց նշել է նաեւ, որ կառուցվածքային բարեփոխումները պետք է շարունակվեն միանշանակ, եւ շեշտը պետք է դնել մակրոտնտեսական ցուցանիշների կատարման վրա:

- Սա վերաբերում է մեզանից յուրաքանչյուրին, քանի որ հաշվի է առնվում ինչպես ծախսերը, այն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Վաղը, դեկտեմբերի 20-ին, Վրաստանի եւ վիրահայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականը՝ «Վրաստան» թերթը կդառնա 100 տարեկան: Մեր թերթի առաջին համարը՝ «Կարմիր աստղ» անվամբ, լույս տեսավ նախորդ դարի 1920 թվականին: Թբիլիսիում լույս տեսնող հայատառ հարյուրավորների մեջ միայն «Վրաստանին» հաջողվեց գալ ու հասնել մեր օրեր: «Վրաստանը» կարելուր նշանակություն ունեցավ հատկապես նորակախ Վրաստանի կազմավորման, հայ-վրացական հարաբերությունների նոր փուլ թեւակոխելու գործընթացում: Քաղաքական ընդվզումների խաչմերուկում, «Վրաստանը» յուրօրինակ ուղեցույց դարձավ վիրահայության համար, հնարավորինս զերծ մնաց քաղաքական շահարկումներից, ծայրահեղություններից, մշտապես առաջնորդվելով ողջախոհության ու կառուցողական սկզբունքներով: Հայագիր «Վրաստան» այսօր Վրաստանի ու վիրահայության բազմաբնագավառ կյանքի հարուստ վավերագիրն է: Այսօր էլ այն զգալի ավանդ է ներդնում հայ եւ վրաց ժողովուրդների է՛լ ավելի մերձեցման, բարեկամական զեղեցիկ ավանդույթների ու մշակութային կապերի պահպանման եւ զարգացման նվիրական գործում:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՓԱԿՎԵՑ

ՍԱԿԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ԱՇՆԱՏԱՆՔԸ ԿՆԱՐՈՒՆԱԿԻ ԱՐՏԱՇԵՐԹ ՆԱՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՅՍՈՒԿ

Կանոնակարգի համաձայն, Վրաստանի խորհրդարանն աշնանային նստաշրջանը փակում է ընթացիկ դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրը:

Այսպիսով, երեկ, դեկտեմբերի 18-ին Վրաստանի նոր գումարման խորհրդարանն ավարտեց աշնանային նստաշրջանը եւ աշխատանքը կշարունակի արտահերթ նստաշրջանների ձեւաչափով:

Աշնանային նստաշրջանի եզրափակիչ օրը խորհրդարանում անցկացվեցին կրթության, գիտության եւ մշակույթի հանձնաժողովի, ինչպես նաեւ պաշտպանության

եւ անվտանգության հանձնաժողովի նիստերը: Անցկացվեց նաեւ խորհրդարանի բյուրոյի նիստը:

Նշենք, որ, ըստ կանոնակարգի, մինչեւ դեկտեմբերի վերջ խորհրդարանի քննարկմանն է ներկայացվելու կառավարության վստահության հարցը: Բացի այդ, արտահերթ նստաշրջանի շրջանակներում խորհրդարանն ընդունելու է 2021 թվականի պետական բյուջեն:

COVID - 19

ՋԱՆՔԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ՝ ԿՈՎԻԴՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետի պաշտոնակատար Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ կորոնավիրուսի կառավարմանը ներգրավված կլինիկաների ղեկավարների հետ:

Հանդիպմանը, որին մասնակցում էին առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան եւ միջգերատեսչական համակարգման խորհրդի օպերատիվ շտաբի պետ Ալեքսանդրե Խոջեւանիշվիլին, քննարկվեցին համավարակային իրավիճակի կայունացման տեսանկյունից, կառավարության երկամսյա սահմանափակումների ծրագրի արդյունավետության, երկրի տարածքով, հիվանդանոցային ոլորտի իրավիճակի եւ բժշկական սարքավորումների մոբիլիզացման ուղղու-

թյամբ ձեռնարկվող քայլերը: Հանդիպմանը կորոնավիրուսի կառավարմանը ներգրավված կլինիկաների ղեկավարները կարելուրեցին առկա սահմանափակումների դերը համաճարակաբանական իրավիճակի հարաբերական կայունացման գործընթացում եւ նշեցին, որ պետք է հատուկ զգուշություն ցուցաբերել տեղաշարժոտ կտրուկ աճից խուսափելու եւ ձեռք բերված արդյունքները չվտանգելու համար:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐՆ ԷՐ, ՈՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ ՍԿՍԵՅՑ ՄՏԱՆԱԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

պես էլ՝ եկամուտները: Պարտադիր է, որ մենք 2021 թվականն անցկացնենք չափազանց զգույշ եւ խելամիտ: Սա հետճգնաժամային արագ տնտեսական վերականգնման ներուժն է, որը մենք պետք է պահպանենք ինչպես երկրի տնտեսության, այնպես էլ՝ մեր յուրաքանչյուր քաղաքացու համար: Նաեւ ուզում եմ հիշեցնել, որ Վրաստանը առաջին երկիրն էր, որը հաստատեց տնտեսական ճգնաժամի ծրագիրը Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համավարակի պայմաններում, եւ դա մեզ հնարավորություն տվեց արագ օգնություն ստանալ դո-

նոր կազմակերպություններից, նշեց Գիորգի Գախարիան:


Անդրադառնալով օտարերկրյա ներդրումների թեմային, Գիորգի Գախարիան հայտարարեց, որ տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության OECD-ի գնահատմամբ, Վրաստանը ամենագրավիչ երկրներից մեկն է ուղղակի օտարերկրյա ներդրումներ ներգրավելու տեսանկյունից, մենք 82 երկրների թվում զբաղեցրինք 8-րդ տեղը:

- Ավելի կոնկրետ, 82 երկրների շարքում մենք զբաղեցնում ենք 8-րդ տեղը: Ընդգծվում է, որ Վրաստանի կառավարության կողմից իրականացված բարեփոխումներն ու

օրենսդրական փոփոխությունները հավասար պայմաններ է ստեղծում ինչպես տեղական բիզնեսի, այնպես էլ՝ օտարերկրյա ներդրողների համար, ինչը լուրջ ձեռքբերում է, բայց մենք ունենք նաեւ համընթաց արարական - շարունակել կառուցվածքային բարեփոխումները եւ մշակել երկրում ուղղակի օտարերկրյա ներդրումների ներգրավման միասնական ռազմավարություն: Էկո-



նոմիկայի նախարարությունը ստացել է այս առաջադրանքը, եւ նրանք արդեն աշխատում են այդ ուղղությամբ: - հայտարարեց Գիորգի Գախարիան:



ԱՄՆ

ԸՆՏՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱՆ ՋՈՒՐԱԳԵՆԻՆ ԸՆՏՐԻՉՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱՆ ԶՈՒՄԻՆ

ԱՄՆ-ի ընտրիչների կոլեգիան՝ 306 կողմ, 232 դեմ ձայների հարաբերակցությամբ նախագահական ընտրություններում հաղթող է ճանաչել Ջո Բայդենին:

Վերջին նահանգը, որտեղ կայացել էր քվեարկությունը, Կալիֆորնիան էր, որը 538 հոգանոց ընտրիչների կոլեգիայում ունի 55 ձայն: Չենց Կալիֆորնիայի շնորհիվ էր, որ Ջո Բայդենին հաջողվեց ստանալ անհրաժեշտ 270 ձայնը:

Արդյունքները, որոնք հաստատվել են կոլեգիայի կողմից, պաշտոնապես կիրառվել են հունվարի 6-ին, իսկ նախագահի երդմնակալության արարողությունը տեղի կունենա հունվարի 20-ին եւ Ջո Բայդենը կստանձնի Սպիտակ տունը:

ԱՄՆ-ԹՈՒՐԻՔԻԱ

ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՈՒՍՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄՆ-ը Թուրքիայի դեմ պատժամիջոցներ է սահմանել C-400 տիպի ռուսական պաշտպանական համակարգեր ձեռք բերելու պատճառով: Պատժամիջոցների ցուցակում հայտնվել են Թուրքիայի պաշտպանական գնումների եւ զարգացման մարմինը եւ նրա նախագահ Իսմայիլ Դեմիրը, երեք այլ աշխատակիցների հետ միասին:

Անկարան C-400 համակարգերը Ռուսաստանից գնել է 2019 թվականի ամռանը, որից հետո ՆԱՏՕ-ի դաշնակից Անկարայից Վաշինգտոնը պահանջել է դրանց ապամոնտաժումը, ինչպես նաեւ իրաժարվել է F-35-ի իրականացնող նախագծից:

Թուրքիան դատապարտել է պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ ԱՄՆ-ի որոշումը՝ այն անվանելով «սարսափելի սխալ»: Անկարան Վաշինգտոնին կոչ է արել վերանայել իր «անարդար որոշումը»:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ-ԵՄ

«ԲՐԵՔՍԻՏ» ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿԱՐԱԶԳՎՈՒՄ ԵՆ

Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնը եւ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Փոն Դեր Լայսենը հեռախոսազրույցում պայմանավորվել են մեկ անգամ եւս երկարաձգել «Բրեքսիտի» բանակցությունների վերջնաժամկետը:

Նախքան նման որոշում կայացնելը, երկու կողմերն էլ համոզված էին, որ Բրիտանիան ստիպված է լինելու լքել Եվրամիությունը առանց համաձայնագրի, սակայն ինչպես հայտարարում են Եվրամիությունում, համաձայնագրի վիճահարույց հարցերի շուրջ ընթացիկ բանակցությունները խոստումնակից են:

ԵՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՆՈՐ ԿԻԲԵՈՒԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվրահանձնաժողովն առաջարկել է Եվրամիությունում ստեղծել կիբեռանվտանգության օպերատիվ կենտրոնների ցանց՝ արհեստական ինտելեկտի լայն կիրառմամբ՝ կիբեռհարձակումների հայտնաբերման եւ դրանց հակազդման համար:

Եվրահանձնաժողովն առաջարկում է նաեւ ստեղծել Եվրամիության նոր կառույց՝ հաբերական գրոհների հայտնաբերման եւ պատասխանի գործում երկրների համակարգման համար: Եվրահանձնաժողովը մտադիր է 2021-2027 թվականներին ներգրավել 4,5 միլիարդ եվրո ներդրումներ Եվրամիությունում կիբեռանվտանգության բարձրացման համար:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԻԾ



Ինչպես հայտարարեց մարդու իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման խորհրդարանական կոմիտեի նախագահ Միխեիլ Սարջվելաձեն, «Վրացական երազանք» խորհրդարանական մեծամասնությունը խորհրդարանին ներկայացրել է «Համաներման մասին» օրինագիծ:

- Օրինագիծը նախատեսում է քրեական պատասխանատվությունից եւ համապատասխան պատժամիջոցներից այն անձանց ազատումը, ովքեր մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 11-ը թույլ են տվել տյալ օրինագծով նախատեսված իրավախախտում: Թեպետ այդ նախագծով նախատեսված չեն այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են սպանությունը, ընտանեկան բռնությունը, հայտարարեց Միխեիլ Սարջվելաձեն՝ հավե-

լույտներին 1-ը նշանակված քրեական տուգանքից ազատումը:

- Ներկայացված նախագիծը ներառում է իրավախախտումների բավական ծավալուն թվարկում, որոնք ենթակա են համաներման: Դրանք են գողությունը, կեղծումը, գույքի վնասումը, մարմնական վնասվածքների մի քանի կատեգորիաները եւ այլն: Համաներման առնչվում է 44 հոդվածներով նախատեսված իրավախախտումներին: Նախաձեռնելով տյալ օրինագիծը, մենք պատրաստ ենք խորհրդատվություններ անցկացնել շահագրգիռ կողմերի հետ, - նշեց Միխեիլ Սարջվելաձեն՝ հավելելով, որ օրինագիծը նախատեսում է նաեւ թմրամյութերի հետ կապված իրավախախտումներ, բացառությամբ թմրանյութի իրացման ու վաճառքի հետ առնչվող հանցագործությանը:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԴՎՎԻԹ ԳԱԲԱԻԶԵՆ՝ ԱԶԱՐԻԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՐ

Դեկտեմբերի 15-ին անցկացվեց Աջարիայի Ինքնավար Հանրապետության 5-րդ գումարման Գերագույն խորհրդի անդրանիկ նիստը:

Նշենք, որ հոկտեմբերի 31-ին Վրաստանում, խորհրդարանական ընտրությունների հետ միասին, անցկացվեցին նաեւ Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրությունները, որոնց արդյունքներով խորհրդի 21 մանդատներից 14-ը բաժին ընկավ «Վրացական երազանքին», իսկ 7-ը՝ «Միացյալ ընդդիմությանը»: Արդյունքների հրապարակումից հետո, ընդդիմադիր պատգամավորները հայտարարեցին, որ բոյկոտելու են խորհրդի նիստերը:

Աջարիայի Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում խորհր-

դի մեծամասնության թեկնածու Դավիթ Գաբաիձեն ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ: Նա գլխավորում էր նաեւ չորրորդ գումարման Գերագույն խորհուրդը:

Գաղտնի քվեարկությանը մասնակցեցին 14 պատգամավորներ, բոլորը ներկայացնում էին իշխող թիւնը, ընդդիմության թեկնածուները նիստին չներկայացան:



ՇՆՈՐՀՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԱՆԱԼՔԱԼԱՔԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՆՇՈՒՄ Է ԻՐ 60-ԱՄՅԱԿԸ



Լրացավ Ախալքալաքիի մունիցիպալիտետի առաջին անգամ ժողովրդի կողմից ընտրված քաղաքապետ Յուրի Ունանյանի 60-ամյակը:

Ծնունդով Բորժոմիի շրջանի ճիխարուալ գյուղից, Յուրի Ունանյանն իր կյանքը կապեց ու շարունակում է կապել Ախալքալաքիի շրջանի հետ: Ախալքալաքիում ավարտեց դպրոց-ինտերնատը: Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո, վերադարձավ արդեն հարազատ դարձած շրջան, աշխատեց տարբեր հաստատություններում, այդ թվում՝ Ախալքալաքիի կոմերտշրջկոմում, կուսակցական շրջանային կոմի-

տեում: 1991-2017 թվականներին եղել Ախալքալաքիի դատախազության քննիչ, դատախազի օգնական, դատախազ, Ախալքալաքի-Նինոծմինդայի շրջանային դատախազության դատախազ:

2017 թվականի Վրաստանում տեղական ընտրություններին, երբ առաջին անգամ անցկացվեց մունիցիպալիտետների քաղաքապետների ընտրությունը, Յուրի Ունանյանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեց Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ:

Ընտրությունից հետո, անցած երեք տարիների ընթացքում Յուրի Ունանյանի անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ Ախալքալաքիի մունիցիպալիտետում իրականացվել են ենթակառույ-

ցային տասնյակ նախագծեր, վերանորոգվել են ճանապարհներ, գազիֆիկացվել գյուղեր, նշանակալի միջոցառումներ իրականացվել սոցիալական ոլորտում ստեղծված իրավիճակի բարելավման ուղղությամբ: Նրա ջանքերով, մունիցիպալիտետում ենթակառույցային նախագծերի իրականացումը չդադարեցվեց նաեւ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների ընթացքում:

«Վրաստան» թերթը ի սրտե շնորհավորում է Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Ունանյանին 60-ամյակի առթիվ, մաղթում քաջառողջություն, հաջողություններ ու առաջընթաց իր պատասխանատու աշխատանքում եւ անձնական կյանքում:

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

ՄԱՅԱ ՃՔԻՏԻՆԿՎԻԼԻ. «ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԱՍԵՂԾՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ»



Դեկտեմբերի 17-ին, իր գլխավորած գերատեսչության տարեկան գործունեության հաշվետվությանը, հանդես եկավ Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Մայա Ցքիտիշվիլին:

րամից 8,5 միլիոն լարիով ֆինանսավորվել են ենթակառուցային տարբեր նախագծեր: Տարածաշրջաններում իրականացվող նախագծերի հիմնադրամի միջոցներով 360 միլիոն լարիով ֆինանսավորվեցին ճանապարհային, ջրամատակարարման եւ այլ ուղղության 1065 նախագծեր եւ դրանց իրականացման համար աշխատանքով ապահովվեցին շուրջ 16 հազար Վրաստանի քաղաքացիներ:

Մայա Ցքիտիշվիլու հավաստմամբ, գյուղի աջակցության ծրագրով 40 միլիոն լարիով 3140 գյուղերում ֆինանսավորվեց բնակչության կողմից նախաձեռնած 4250 նախագիծ:

- Չնայած համավարակով պայմանավորված բարդությունների, գերազանցումով է կատարվում 2020 թվականի բյուջեն, ինչը 166 միլիոն լարիով գերազանցում է անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշը: Հատկանշական է, որ 2020 թվականին չի կանգնեցվել ռազմավարական նշանակության եւ ոչ մի նշանակալի ենթակառուցային նախագիծ, ասաց Մայա Ցքիտիշվիլին:

Նա խստեց նաեւ առաջիկա ծրագրերի մասին, նշելով, որ մի քանի տասնյակ բնակավայրերի համար կիրականացվեն ջրամատակարարման նախագծեր, կսկսվի 7020 աշակերտի համար նախատեսված 41 դպրոցի եւ 15 մանկապարտեզի շինարարությունը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ՄԵՐ ԶԱՆՔԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ»



Դեկտեմբերի 14-ին, երկրի գործադիր իշխանության «Կառավարության հաշվետվությունը բնակչությանը» նախաձեռնության շրջանակներում, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան հանդես եկավ գերատեսչության կողմից իրականացված աշխատանքների տարեկան հաշվետվությանը:

Անդրադառնալով բիզնեսին ցուցաբերվող օգնության թեմային, էկոնոմիկայի նախարարը հայտարարեց, որ «Արտադրի՛ր Վրաստանում» պետական ծրագիրը դարձավ բիզնեսի առանձնապես համավարակից տուժած բիզնեսի աջակցության ամենագործուն լծակներից մեկը:

Այդ նախագիծը Վրաստանի կառավարության ամենահաջողակ նախաձեռնություններից մեկն է: Գործակալությունը միավորում է բիզնես հատվածի աջակցությանն ու երկրի տնտեսական զարգացմանն ուղղված բոլոր պետական ծրագրերը: 2020 թվականի ընթացքում, չնայած համավարակին, ֆինանսավորվեցին 78 նոր նախագծեր, հաստատված վարկերի գումարը կազմեց 96 միլիոն լարի, իսկ ներդրումների գումարը՝ 161 միլիոն լարի, ընդգծեց Նաթիա Թուրնավան հավելելով, որ միկրո եւ փոքր ձեռներեցության աջակցության ծրագիրը գործնականում կրկնապատկվեց եւ կազմեց 40 միլիոն լարի:

Նախարարը խոսեց նաեւ գործարարների աջակցության վարկա-դրամաշնորհային սխեմայի մասին, նշելով, որ այդ տեսակետներից ֆինանսավորվել է 121 նախագիծ, իսկ դրամաշնորհային վարկերի գումարը կազմել է 77,5 միլիոն լարի:

Իր խոսքում, էկոնոմիկայի նախարարը խոսեց «Պետությունը՝ քո գործընկեր» ծրագրի մասին, որը տարածաշրջանների բնակիչներին ընձեռնում է տեղում պետական ծրագրերից օգտվելու ու իրենց գործը սկսելու հնարավորություն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ԻՎԱՆԵ ՄԱՃԱՎԱՐԻՎԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՎՐԱՍԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, «Կառավարության հաշվետվությունը բնակչությանը» նախաձեռնության շրջանակներում, անցկացրեց ֆինանսների նախարարության 2020 թվականի հաշվետվության շնորհանդեսը:

րողացավ բավական մեծ ծավալի ռեսուրսներ ձեռք բերել, որին նպաստեցին նախքան համավարակը Վրաստանում առկա առողջ մակրոտնտեսական եւ ֆիսկալ չափանիշները: Ըստ նախարարի՝ Վրաստանը կարողացավ պահպանել վարկային վարկանիշները:

Իվանե Մաճավարիանին ուշադրությունը բեռնեց նաեւ բյուջետային չափանիշներին եւ նշեց, որ նախահամավարակային շրջանում նշանակալիորեն նվազեցին ընթացիկ եւ աճեցին կապիտալ ծախսերը մինչեւ ՀՆԱ (համախառն ներքին արտադրանք) 8,5 տոկոս, որն աշխարհում բարձր ցուցանիշներից մեկն է համարվում: Նախարարը կարեւորեց նաեւ այն, որ ցածր ցուցանիշ գրանցեց բյուջետային դեֆիցիտը (պակասուրդը): Իվանե Մաճավարիանու խոսքով, անցած տարի Վրաստանն ունեցավ հարկային եկամուտների աննախադեպ բարձր ավելցուկ՝ 600 մլն լարիի չափով:

Շնորհանդեսին Իվանե Մաճավարիանին ուշադրություն հատկացրեց նաեւ միջազգային օգնություններին եւ նշեց, որ Վրաստանն առաջին երկիրն էր, որի հակաճգնաժամային ծրագիրը հաստատվեց Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից: Ինչպես նշեց նախարարը, արդեն ստորագրված են համաձայնագրեր, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1,9 միլիարդ դոլար:

Ֆինանսների նախարարը հանգամանորեն խոսեց նաեւ երեք հիմնական ուղղությունների մասին, որոնց համար, համավարակի դեմ պայքարում, բյուջեից հատկացվել է լրացուցիչ գումար. խոսքն առողջապահության, քաղաքացիների

եւ բիզնեսի աջակցության մասին է: Համավարակի դեմ պայքարում, առողջապահական համակարգին հատկացվել է հավելյալ ավելի քան 1 միլիարդ 200 միլիոն լարի: Բիզնեսի աջակցությանը հատկացվել է ավելի քան 1 միլիարդ 600 միլիոն լարի: Իրականացվել են եկամտային եւ գույքի հարկային զեղչեր, որոնցից օգտվում է ավելի քան 33 հազար ընկերություն, օգտագործելով այն 425 հազարից ավելի աշխատատեղերի համար:

Ֆինանսների նախարարը խոսեց նաեւ հարկային վարչարարության մասին: Նրա խոսքով, 2020 թվականի ընթացքում, տարբեր ձեւաչափերում հետաձգվել են 50 000-ից ավելի հարկատուի հարկային մարումներ եւ պարտավորություններ՝ կազմելով 400 միլիոն լարիից ավելի գումար: Այդ նպատակով՝ RS.ge-ում մշակվեցին էլեկտրոնային նոր համակարգեր, որոնք ապահովեցին փոխհատուցման անխափան տրամադրումն ու հարկային զեղչերի իրականացումը:

Իվանե Մաճավարիանին խոսեց նաեւ հարկային ծառայությունների կողմից կորոնավիրուսի դեմ պայքարի ուղղությամբ տարվող քայլերի մասին: Նրա խոսքով, առաջին իսկ օրերից իրականացվեցին բոլոր այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք ապահովեցին Վրաստանի տրամադրում բեռնափոխադրման եւ ուղեւորների անխափան ու անվտանգ տեղաշարժը: Համավարակով պայմանավորված բարդություններին հակառակ, մաքսային աշխատակիցներն ու բժշկական անձնակազմը, անհրաժեշտ բոլոր սարքավորումների օգնությամբ, 24 ժամվա ընթացքում լիարժեք իրականացնում էր իր վրա դրված կարեւոր գործառնությունները:

Շնորհանդեսին Իվանե Մաճավարիանին ուշադրություն կենտրոնացրեց բարեփոխումների վրա՝ նշանա-

կալի բարեփոխումներից մեկը համարելով ՀՆԱ-ի ավելցուկների վերադարձի համակարգի կառավարումը: Նախարարի խոսքով, 2019 թվականին, 2016 թվականի համեմատ, վերադարձված հարկերը գրեթե քառապատկվեցին: 2020 թվականում առավել նշանակալի առաջընթաց ունեցավ: Ստեղծվեց ամբողջությամբ ավտոմատիզացված ՀՆԱ-ի ավելցուկների վերադարձման համակարգը, երբ առանց արտադրողի պահանջի նրան վերադարձվեց հասանելիք ավելցուկը: Ավտոմատ վերադարձման համակարգից հենց սկզբից օգտվեց ավելի քան 10 000 հարկատու, վերադարձվեց ավելի քան 165 մլն լարի: Նոր համակարգն ապահովում է բիզնեսում հարյուրավոր միլիոն լարիի ֆինանսական ակտիվի անխափան մատչելիությունն եւ տնտեսական առավելությանը հավասարվում շահույթի վճարման բարեփոխմանը:

Ինչպես նշեց ֆինանսների նախարարը, 2020 թվականին Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից իրականացվեց եկամուտների ծառայության հարկային վարչարարության դիազնոստիկ գնահատում: Գնահատման համաձայն, նշանակալիորեն բարելավվել է գնահատման 14 ինդիկատոր: Հանրային ֆինանսների թափանցիկության ուղղությամբ իրականացված քայլերի շնորհիվ, բյուջեի բացության ինդեքսի OBS տեսանկյունից, Վրաստանը շարունակում է մնալ լիարժեք թափանցիկ երկրների հնգյակում:

Որպես միջնաժամկետային մարտահրավերներ, ֆինանսների նախարարը նշեց կառավարության պարտքի նվազումը, պակասուրդի նվազումը, կապիտալ ծախսերի պահպանումը, ՀՆԱ-ի 8 տոկոսանոց ցուցանիշով պայմանավորված տնտեսական զարգացման նպատակում, հարկային վարչարարության արդյունավետությունը, ֆիսկալ ռիսկերի նվազումը, պետական արտադրամասերի ամբողջական բարեփոխումը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տությունների կարգավորման եւ մարդու իրավունքների, էկոնոմիկայի զարգացման, սոցիալական քաղաքականության եւ մարդկային կապիտալի զարգացման, պետական կառավարման ուղղություններով:

Վերոնշյալ յուրաքանչյուր հանգուցային ուղղությունը ներառում է կառավարության մշակած մոտեցումն ու գործողության կոնկրետ քայլերը, որոնք մանրամասն ներկայացված են խորհրդարանի հաստատմանը ներկայացված կառավարական ծրագրում:

Կառավարության գործողության ծրագրի հետ միասին, Վրաստանի վարչապետի թեկնածու Գիորգի Գախարիան խորհրդարանին ներկայացրեց կառավարության կազմը, որտեղ, նախորդի համեմատությամբ, իրականացվել է միայն արդարադատության նախարարի փոփոխումը (Մախկին Մախազահ Թեա Ծուլուկիանին ներկայումս խորհրդարանի պատգամավոր է):

Ստորեւ ներկայացնում ենք Գիորգի Գախարիայի կողմից ներկայացված կառավարության կազմը.

Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար - Մայա Ցքիտիշվիլի

Արդարադատության նախարար - Գոչա Լորթքիվանիձե

Ներքին գործերի նախարար - Վախթանգ Գոմեւալուրի

Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար - Նաթիա Թուրնավա

Արտաքին գործերի նախարար - Դավիթ Ջալկալիանի

Ֆինանսների նախարար - Իվանե Մաճավարիանի Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար - Միխեիլ Չխենկելի

Բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար - Էկատերինե Տիկարաձե

Բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար - Լեւան Դավիթաշվիլի

Պաշտպանության նախարար - Իրակլի Դարիբաշվիլի

Չաշտեցման եւ քաղաքացիական իրավապաշտպանության հարցերով պետական նախարար - Թեա Ավալեդիանի:

Խորհրդարանի կանոնակարգի համաձայն, խորհրդարանը կառավարության կազմը հաստատելու է հաջորդ շաբաթ:

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՀԻՆԳ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԶԵՂԱՐԿԵՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համապատասխան դիմումները օրենսդիր մարմնին դեռ չեն ներկայացվել երեք կուսակցությունների՝ «Գիրչի», «Քաղաքացիների» եւ «Հայրենասերների դաշինքի» կողմից:

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը չեղյալ է համարել հինգ ընտրական սուբյեկտների կուսակցական ցուցակները: Համապատասխան հրամանագրերը հրապարակվել է ԿԸՀ-ի կայքում:

Մասնավորապես, ընտրական գրանցումը վերացվել է եւ կուսակցական ցուցակից հանվել են հետեւյալ քաղաքական սուբյեկտների թեկնածուները. «Միասնական ազգային շարժում-Միավորված ընդդիմություն-Ուժը միասնության մեջ է» ընտրադաշինքը, «Բաքրաձե, Ուզուլավա, Բուկերի-Եվրոպական Վրաստան-շարժում» հանուն ազատության»,

«Գիրգի Վաշաձե-նազնավարություն Աղմաշենբեի» ընտրադաշինքը, Շալվա Նաթելաշվիլի-Վրաստանի լեյբորիստական կուսակցությունը, «Լեյլո-Մամուկա Խազարաձե»:

Արձանագրությունում նշված է, որ այդ սուբյեկտների ցուցակները չեղյալ են հայտարարվել իրենց դիմումի հիման վրա:

Հիշեցնենք, որ, ըստ ընթացակարգի, պատգամավորները յոթ օր ժամանակ ունեն որոշումը փոխելու եւ դիմումները հետ վերցնելու համար: Այս ժամկետի ավարտից հետո խորհրդարանական ընթացակարգային հարցերի կոմիտեն կսկսի քննարկել դիմումները 8-15 օրվա ընթացքում: Կոմիտեի համապատասխան որոշումից հետո, պատգամավորների լիազորությունների դադարեցման վերաբերյալ վերջնական որոշումը խորհրդարանի անդամները կկայացնեն լիագումար միստի ընթացքում:

ԳՐԻԳՈՒ ՎԱՇԱՉԵ. «ԽՆԴԻՐ Է ՄՆԱԼ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ԶԳԻՏԵՆ ՍՈՎՈՐԵԼ ԻՐԵՆՑ ԻՍԿ ՍԽԱԼՆԵՐԻ ՎՐԱ»



Վրաստանի ընդդիմադիր «Միացյալ ազգային շարժում» կուսակցության նախագահ Գրիգոր Վաշաձեն հեռագրով կուսակցությունից: Ֆեյսբուքյան իր էջում նա գրառում կատարեց գնալու պատճառների մասին: Ըստ Վաշաձեի, մեզ քայլը բարդ է իր համար, սակայն այլ ելք չի գտնում:

«Ես չեմ համակերպվի առանց կուսակցության ղեկավարության հետ խորհրդակցելու, կուսակցության քայլերի մասին որոշումներ կայացնելուն: Չեմ համակերպվի կուսակցության ներսում ու դրսում այնպիսի կերպարներին, ում պատճառով երբեք չենք վերականգնի ընտրողի վստահությունը»:

Անդրադառնալով դեսպանի վրա հարձակումների թեմային, Վաշաձեն ընդգծեց, որ տպավորություն է ստեղծվում, թե կուսակցության ներսում չգիտեն, որ դեսպանի վրա հարձակվելով, հարձակվում էին երկրի վրա, որը նա ներկայացնում է: Վաշաձեի խոսքով, ԱՄՆ ու ԵՄ հետ ունեցած հարաբերություններն այսպիսով կուսակցության անդամների կողմից ոտնահարվում են:

«Ինձ համար փոքրամասնություն լինելը կամ մենակ մնալը խնդիր չէ: Խնդիր է մնալ այնտեղ, որտեղ չգիտեն սովորել իրենց իսկ սխալների վրա»:

Հիշեցնենք՝ Գրիգոր Վաշաձեն 2008թ. դեկտեմբերից մինչև 2012 թվականը եղել է արտաքին գործերի նախարար:

2017թվականից Միացյալ ազգային շարժման կուսակցության քաղաքական խորհրդի նախագահն էր, իսկ 2019 թվականին ընտրվեց կուսակցության նախագահ:

ՍԱԿՐԵԲՈՒԼՈՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեռևս նոյեմբերի վերջերին Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոն ձեռնամուխ եղավ քաղաքապետարանի կողմից ներկայացված մունիցիպալիտետի 2021 թվականի բյուջեի նախագծի քննարկմանը:

Դեկտեմբերի 15-ին, այս անգամ սակրեբուլոնի ֆինանսաբյուջետային հանձնաժողովը սկսեց քաղաքապետարանի կողմից ներկայացված նոր տարբերակի քննարկումը: Այն ներկայացրեց քաղաքապետարանի ֆինանսական ծառայության պետ Մկրտիչ Մղդեսյանը:

Բյուջեի նախագծի շնորհանդեսից հետո՝ պատգամավորները հետաքրքրվեցին մունիցիպալիտետի բյուջեից եկամտի նոր աղբյուրներով համալրելու հար-

ցով: Այդ նպատակով որոշում ընդունվեց հաջորդ միստերին լսել հարկային ծառայության եւ աուդիտի ծառայության ներկայացուցիչներին:

Սխտում հատուկ ուշադրություն դարձվեց մունիցիպալային ավելացած ծախսերի թեմային, նշվեց դրանց նկատմամբ վերահսկողության ուժեղացման եւ, հնարավորության սահմաններում, խնայողության պայմանակարգի հաստատման անհրաժեշտությունը:



Դեկտեմբերի 16-ին անցկացվեց Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի բյուրոյի անդրամիկ նիստը:

Ե օգտագործել ոչ թե արմատական ընդդիմության կողմից կատեգորիկ պահանջների շուրջ, այլ համաձայնության գալ երկրի եւ հասարակության շահերի ու հարցերի շուրջ:

Նրա խոսքով, իշխող թիմը հենց սկզբից աջակցում էր քաղաքական երկխոսությանը եւ ամբողջությամբ մասնակցում բոլոր փուլերին:

- Շնորհակալություն եմ հայտնում գլխավոր ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի եւ Եվրամիության դեսպաններին: Մենք կողմ ենք երկխոսությունը շարունակելուն: Հուսով եմ երկխոսությունը կավարտվի դրական արդյունքով: Այնուամենայնիվ, երկխոսության

շրջանակներում հնարավոր չի լինի ցանկացած համաձայնությունների գալ երկրի սահմանադրության, ռազմավարական շահերի կամ օրենքի գերակայության հաշվին: Մենք պատրաստ ենք սահմանադրության շրջանակներում համաձայնությանը, որոնք անհրաժեշտ են Վրաստանի ժողովրդավարության եւ բազմակուսակցական խորհրդարանի գործունեության համար: Հուսով եմ ու ողջամիտ ակնկալիքներ ունեմ, որ մոտ ժամանակներս մի շարք կուսակցություններ ներգրավված կլինեն խորհրդարանի գործունեության մեջ,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻԶԵ. «ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՊԵՏԷ ԱՌԵՉՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՈՒԹՅԱՆԸ»

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի խորհրդարանի մեծամասնության ղեկավար Իրակլի Կորախիձեն հայտարարեց, որ խորհրդարանում գրանցվել է կուսակցությունների պետական ֆինանսավորման օրինազգեթի փաթեթ:

Ըստ օրինանախագծի, կուսակցությանը, որի անդամների խորհրդարանական մանդատները կկասեցվեն կամ, որոնք չեն մասնակցի խորհրդարանի աշխատանքին, չեն ստանա պետական ֆինանսավորում, կամ ֆինանսավորումը կկասեցվի մեկ տարով: Միեւնույն ժամանակ, կգոյացվեն այն պատգամավորների վարձատրությունները, ովքեր ամսվա ըն-

թացքում չեն մասնակցի ոչ մի լիազումար նիստի: Ընդ որում, կուսակցությունների համար պետական ֆինանսավորման դադարեցումը չի վերաբերելու մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ի խորհրդարանական ընտրություններն անցկացված ընտրությունների արդյունքում ձեռքբերված ֆինանսավորմանը:

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեկտեմբերի 11-ին աշխատանքը սկսեց Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանը:

Անդրամիկ նիստում պատգամավորներն ընտրեցին օրենսդիր մարմնի նախագահին, փոխնախագահներին, խորհրդարանական կոմիտեների ղեկավարներին: Հաջորդ լիազումար նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան խորհրդարանական կոմիտեների ձեւավորմանը, կոմիտեական ղեկավարության ընտրությանը:

Ագրարային կոմիտեի նիստում, կոմիտեի նախագահ Նինո Ծիլոսանու առաջարկությամբ, Ախալքալաքից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանն ընտրվեց խորհրդարանի ագրարային կոմիտեի փոխնախագահ:



Նշենք, որ այդ կոմիտեի անդամ է նաեւ համաձայնական ընտրակարգով պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը: Թերթի ընթերցողներին հիշեցնենք, որ նորանկախ Վրաստանի 1999-2004 թվականների խորհրդարանում Գիվի Շուգարովը զբաղեցնում էր խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի փոխնախագահի պաշտոնը, իսկ 8-րդ գումարման խորհրդարանում Ռուսլան Պողոսյանը մարդու իրավունքների խորհրդարանական կոմիտեի փոխնախագահն էր: